ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՊԵՏՐՈՍՅԱՆ ՀՌԻՓՍԻՄԵ ԼՅՈՎԱՅԻ

ԸՆՏԱՆԻՔԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆԻ ՎԱԽԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

ԺԹ.00.03-«Սոցիալական հոգեբանություն (միջանձնային հարաբերություններ, ընտանեկան, խմբային գործունեություն)» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

ԵՐԵՎԱՆ 2015

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «ՈՒրարտու» համալսարանում:

Գիտական ղեկավար՝ հոգեբանական գիտությունների դոկտոր
Մեղրակ Աղասու ՄԵԴՐԱԿՅԱՆ

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ հոգեբանական գիտությունների դոկտոր
Սրբուհի Ռաֆիկի ԳԵՎՈՐԳՅԱՆ

հոգեբանական գիտությունների թեկնածու
Նարինե Ասքանազի ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Առաջատար կազմակերպություն՝ Գյումրու Մ.Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015թ.-ի նոյեմբերի 17-ին՝ ժամը 12:00-ին, Խաչատուր Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում գործող ՀՀ ԲՈՀ-ի փիլիսոփայության և հոգեբանության 064 մասնագիտական խորհրդում:

Հասցեն՝ 0010, Երևան, Տիգրան Մեծի 17:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ-ի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 16.10.2015թ.-ին:

Փիլիսոփայության և հոգեբանության 064 մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար, հոգեբանական գիտությունների դոկտոր՝ **Կ. Ե. Վարդանյան**

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

<u>Թեմայի արդիականությունը:</u> Երեխայի սոցիալականացման գործընթացն առաջին հերթին ընթանում է ընտանիքում՝ սոցիալական դերերի, արժեքների յուրացման և սեփական վերաբերմունքը մշակելու, անհատական առանձնահատկություններն իրագործելու միջոցով: Հետևաբար, դպրոցական կյանքում ծագող խնդիրների նկատմամբ երեխայի վերաբերմունքի մեջ գերակշռող մաս են կազմում ընտանեկան միջավայրում ձեռք բերած սոցիալական դիրքորոշումները, որոնք նպաստում կամ խոչընդոտում են վախերի և տագնապների դրսևորմանը: Ընտանիքի սոցիալ-հոգեբանական գործոնների ազդեցությունը մեծ է կրտսեր դպրոցականի վախերի կանխարգելման գործում: Ընտանիքի կառուցվածքը, ընտանեկան դերերը, հիմնական գործառույթները, ներընտանեկան հարաբերությունների մակարդակները կարևոր դեր և նշանակություն ունեն երեխայի վախերի դրսևորման և կանխարգելման գործընթացում: Ընտանիքը նաև այն սոցիալական միջավայրն է, որտեղ երեխան դպրոցում անցկացրած մի քանի ժամերից հետո փորձում է վերլուծել օրվա իրադարձությունները, տպավորությունները և տեղեկությունները, որոնք պայմանավորված են ներընտանեկան հարաբերությունների բնույթով և ծնողի վերաբերմունքով:

Ընտանիքի դերը երեխայի հոգեկան առողջության պահպանման գործում արդիական է հատկապես ներկայիս պայմաններում, երբ տեղեկատվության մեծ հոսքը դժվարեցնում է ինքնուրույն կողմնորոշվելը: Իրականի և երևակայականի սահմանագծին գտնվող կրտսեր դպրոցականը հայտնվելով անելանելի իրավիճակում, չի կարողանում համարժեք վարքագիծ դրսևորել և հայտնվում է վախի, տագնապի ոլորաններում:

Վախի հիմնախնդիրը հին է, բայց և միշտ էլ այսօրեական, քանզի դրա գոյության պատճառների ու պայմանների փոփոխություններն անհրաժեշտ են դարձնում երևույթի նորովի գիտական վերլուծությունն ու արժևորումը, դրա կանխարգելման ու հաղթահարման նոր մեթոդների և ձևերի մշակումը:

Տագնապը սոցիալական կյանքի արդյունք է, որը մեծապես կախված է սոցիալական դիրքորոշումներից և կարող է պարարտ հող հանդիսանալ կրտսեր դպրոցականի վախերի դրսևորման համար: Թե ինչպե՞ս, կամ թե ի՞նչ չափով կարտահայտվի այս կամ այն վախն ընդհանրապես, մեծամասամբ կախված է երեխայի հոգեկան զարգացման առանձնահատկություններից և կոնկրետ այն սոցիալական միջավայրից, որում ձևավորվում և ընթանում է նրա անձի զարգացումը:

Կրտսեր դպրոցականի վախերի կանխարգելման գործում կարևորվում է հատկապես ծնողների հոգեբանական գիտելիքների հարստացումը, նրանց կողմից երեխայի բազմակողմանի զարգացումն ապահովող դաստիարակությունը, ընտանեկան առողջ մթնոլորտը, դպրոցում ստացած գիտելիքների ամրապնդումը ծնողների օգնությամբ: Այդ իսկ պատճառով, թե' տեսական, թե' գործնական առումներով արդիական է կրտսեր դպրոցականի

ընտանիքի, ներընտանեկան հարաբերությունների, ծնողական վերաբերմունքի ուսումնասիրումը: Ընտանիքի դերի հետազոտումը հնարավորություն կընձեռի միջոցներ ձեռնարկել երեխայի զարգացման ընթացքում ընտանեկան միջավայրով պայմանավորված վախերի կանխարգելման և ընտանիքի դերի՝ որպես վախերի կանխարգելման միջոցի բարձրացման համար:

Մի շարք փիլիսոփաներ, հոգեբաններ, հոգեթերապևտներ անդրադարձել են այս հիմնախնդրին և առաջարկել որոշակի լուծումներ (Զ. Ֆրոյդ, Կ. Հորնի, Է. Ֆրոմմ, Է. Էյդեմիլլեր, Ա. Ելիզարով, Յու. Ալյոշինա, Տ. Անդրեևա, Ա. Զախարով, Ա. Սպիվակովսկայա, Յու.Շչերբատիխ, Վ.Գարբուզով):

Արժևորելով նրանց ներդրումը, պետք է փաստել, որ այսր էլ վերոնշյալ հիմնախնդիրը շատ արդիական է, քանի որ հասարակական կյանքի արագ փոփոխությունների արդյունքում կրթության և դաստիարակության աղճատ-վածությունը, տեղեկատվության ծավալն ու ինտենսիվությունը (ԶԼՄ-ների «անմեղ» հաղորդումները, ժողովրդական «վախ առնելու» մեթոդի տարածումը, որոշ ընտանիքներ կրոնական հավատալիքների մուտքը), համակարգված գիտելիքների պակասը հանգեցրել են երեխայի կենսաբանական, հոգեբանական, սոցիալական հասունացման անհամամասնության: Արդյունքում խախտվել է հոգեկան առողջության պահպանման գործընթացը՝ հիմք հանդիսանալով նորանոր վախերի ձևավորման: Ստեղծված իրավիճակում կարևորվում և խիստ արդիական է դառնում ընտանեկան դաստիարակության սոցիալական և հոգեբանական ազդեցության շեշտադրումը:

Աշխատանքն արդիական է նաև այն պատճառով, որ կրտսեր դպրոցականի վախերի կանխարգելման գործում փորձ է արվում կարևորել ծնողական այն վերաբերմունքը, որի «ընդունող» կողմնորոշումը երեխայի հետ հաղորդակցվելու ընթացքում կիրառվող վարքաձևերի, նրա անհատականությունը, բնավո-րությունն ու արարքներն ընկալելու և հասկանալու առանձնահատկությունների համակարգ է դիտարկվում: Վերջինս էլ նպաստում է կրտսեր դպրոցականի վախերի կանխարգելմանը՝ դիտարկվելով որպես առաջնային և ամենագլխավոր գործոն:

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել ընտանեկան միջավայրի, ներընտանեկան փոխհարաբերությունների, ծնողական վերաբերմունքի ազդեցությունը կրտսեր դպրոցականի վախերի և տագնապների կանխարգելման գործընթացում:

Հետազոտության խնդիրներն են՝

1. Տեսական վերլուծության և փորձարարական հետազոտությունների միջոցով հիմնավորել կրտսեր դպրոցականի ներընտանեկան հարաբերություն-ների, գործառույթների, ընտանիքի քանակական կազմի, ծնողի ղեկավարման ոճի ազդեցության նշանակությունը երեխայի դպրոցական վախերի, տագնապների առաջացման և կանխարգելման գործում, որը հետագա հետազոտական ռազմավարության մշակման հիմք կարող է ծառայել:

2. Հետազոտել «ծնողական վերաբերմունքի» դերը կրտսեր դպրոցականին ընկալելու, հասկանալու, որպես «այդպիսին» ընդունելու, դրանով իսկ տագնապները, վախերը կանխարգելելու գործում:

3. Հետազոտել կրտսեր դպրոցականի սոցիալական կարգավիճակի գործոնը նրա վախերի և տագնապների բնույթի վրա:

4. Բացահայտել երեխայի դպրոցական վախերի, տագնապների և ծնողի վերաբերմունքի փոխկապվածությունը:

5. Դպրոցական վախերի, տագնապների կանխարգելմանը և ծնողական «ընդունող» վերաբերմունքի գիտակցմանը նպաստելու հնարավորության և միջոցների բացահայտման նպատակով իրականացնել ձևավորող գիտափորձ:

6. Ձևավորող գիտափորձից հետո կատարել երեխայի դպրոցական վախերի, տագնապների և ծնողական վերաբերմունքի մակարդակներում տեղի ունեցած փոփոխությունների բացահայտում և վերլուծություն:

7. Լրացուցիչ գիտափորձի միջոցով նպաստել ծնողի հոգեբանական գիտելիքների, հմտությունների համարժեք ձևավորմանը, հետևաբար նաև՝ երեխայի դպրոցական վախերի, տագնապների կանխարգելմանն ընտանեկան միջավայրում:

8. Հետազոտության արդյունքների հիման վրա մշակել կրտսեր դպրոցականի վախերի կանխարգելմանն ուղղված մեթոդական հանձնարարականներ՝ ծնողների և մանկավարժների համար:

<u>Հետազոտության վարկածը:</u> Ենթադրվում է, որ ներընտանեկան փոխհարաբերությունների բնույթը, ներքին և արտաքին գործառույթներն անդրադառնում են կրտսեր դպրոցականի դպրոցական վախերի և տագնապների դրսևորման վրա: Առավելապես ծնողական այն վերաբերմունքը, որը միտված է երեխայի հետ հաղորդակցվելու ընթացքում նրան ընկալելուն և հասկանալուն, նպաստում է կրտսեր դպրոցականի վախերի կանխարգելմանը և հոգեշտկման աշխատանքների արդյունավետ կազմակերպմանը:

Երեխային ընկալելու և հասկանալու ծնողի առանձնահատկությունը դիտարկվում է երեխայի անհատականությունն ու արարքները, նրան որպես «այդպիսին» ընդունելու և սոցիալականացնող, դրական ինքնագիտակցության (ես-հայեցակարգի ձևավորման ու ինքնահաստատման) հասցնելու հնարավորության փոխկապվածություն, հետևաբար նաև կարևոր պայման՝ վախերի, տագնապների կանխարգելման գործում:

<u>Հետազոտության օբյեկտը</u> կրտսեր դպրոցական տարիքի (6-10տ) երեխաներն են և նրանց ծնողները:

<u>Հետազոտության առարկան</u> կրտսեր դպրոցականի վախերի և տագնապների կանպարգելման սոցիալ-հոգեբանական առանձնահատկություններն են:

<u>Հետազոտության տեսական և մեթոդաբանական հիմքերը:</u> Ատենախոսության հիմքում ընկած է համակարգային մոտեցումը և զարգացման սկզբունքը, որով մենք դիտարկում ենք ընտանիքը որպես անձի զարգացման առաջնային միջավայր, հետևաբար նաև առաջնային՝ վախերի, տագնապների առաջացման, կանխարգելման գործում և ծնողական վերաբերմունքը որպես փոփոխվող

համակարգ: Տեսական և մեթոդաբանական հիմք են նաև՝ ընտանիքի ուսումնասիրության ժամանակակից հիմնախնդիրների վերաբերյալ Դ.Մայերսի, Է. Էդեմիլլերի, Դ. Ռայգորոդսկու, Յու. Այոշինայի, Ա.Ելեզարովի, Տ.Անդրեևայի, Ս.Սեդրակյանի, Ա.Նալչաջյանի հայեցակարգային դրույթները, վախի առաջացման և հաղթահարման ուղիների վերաբերյալ՝ Ա.Զախարովի, Վ.Գարբուզովի, Յու. Շչերբատիխի և այլոց մոտեցումները, որոնցում շեշտվում է ընտանիքի, ներընտանեկան հարաբերությունների և դերերի, ընտանիքի և երեխայի վախի փոխներգործության դերը: Հետազոտության համար կարևոր հիմք են հանդիսացել նաև Զ.Ֆրոյդի, Կ.Յունգի, Վ.Ֆրանկլի, Է.Ֆրոմմի հայեցակարգային մոտեցումները:

<u>Հետազոտության հիմնական մեթոդները և մեթոդիկաներն են՝</u> ձևավորող գիտափորձի մեթոդ, դիտման մեթոդ (օբյեկտիվ և մասնակցող), զրույցի մեթոդ, հարցազրույցի մեթոդ՝ «Ինչի՞ց եմ ես վախենում», «Վախի նշանները» (հեղինակային հարցաշարերի կիրառմամբ), թեստավորման մեթոդ՝ «Ֆիլլիպսի դպրոցական տագնապայնության թեստ»-ը, Հայաստանի պայմաններում տեղայնացված Ա. Վարգայի և Վ. Ստոլինի կողմից մշակված «Ծնողական վերաբերմունքի թեստ-հարցարան»-ը, պրոյեկտիվ մեթոդիկաներ՝ Զ.Բուկի առաջարկած «Տուն–ծառ–մարդ» թեստի Ռ. Բերնսի տարբերակը, Ռ.Բերնսի և Ս.Կաուֆմանի առաջարկած «Ընտանիքի կինետիկ նկար»-ը, հետազոտության արդյունքների մշակման մաթեմատիկական վիճակագրության մեթոդը:

<u>Աշխատանքի գիտական նորույթը:</u>

- Ատենախոսության մեջ նոր մոտեցում է ցուցաբերվել կրտսեր դպրոցականի վախերի, տագնապների ուսումնասիրմանը՝ ներընտանեկան փոխհարաբերությունների, գործառույթների, ծնողի վերաբերմունքի տեսանկյունից:
- Փորձ է կատարվել բացահայտել «ծնողական վերաբերմունք»-ի ազդեցությունը դպրոցական վախերի, տագնապների դրսևորման վրա, նաև ցույց է տրվել «ծնողական վերաբերմունք»-ի (դեպի «ընդունում») փոփոխության արդյունքում վախերի, տագնապների կանխարգելման, հաղթահարման դինամիկան:
- Մեր կողմից ներդրված մեթոդական համալիրով բազմակողմանիորեն ուսումնասիրվել է վախերի կանխարգելման գործընթացը կրտսեր դպրոցական տարիքում:
- Ընտանիքի սոցիալ-հոգեբանական գործոնների հետազոտումը հնարավորություն է ընձեռել գիտական հիմնավորված միջոցներով նպաստել վերջիններիս համարժեք կայացմանը և «ծնողական վերաբերմունք»-ի (դեպի «ընդունում») փոփոխությանը:
- Իրականացվել է արդյունավետ շտկողական աշխատանք՝ ապահովելով դպրոցական վախերի, տագնապների կանխարգելման գործընթացն ընտանեկան միջավայրում:

Տեսական նշանակությունը: Ատենախոսությունը ներառում է տեսական ընդհանրացումներ կրտսեր դպրոցականի ընտանեկան փոխհարաբերությունների, գործառույթների, ծնողական վերաբերմունքի, դաստիարակության ոճի և վախի, տագնապի տարբեր դրսևորումների, մեկնաբանումների, տարիքային դինամիկայի վերաբերյալ: Հիմնահարցի հետազոտության տվյալների վերլուծության արդյունքում բացահայտված տեսական դրույթները, եզրահանգումները կհամալրեն ընտանեկան հարաբերություններով, ծնողական վերաբերմունքով պայմանավորված դպրոցական վախերի և տագնապների հոգեբանական առանձնահատկություններին, դրանց հաղթահարման գործընթացում հոգեդինամիկ, դրական, կառուցողական օրինաչափություններին վերաբերող հայեցակարգերը:

Ելակետ ընդունելով այն փաստը, որ ներընտանեկան հարաբերություններում ձեռք բերած փորձը, մեծամասամբ ենթագիտակցորեն, երեխան փոխադրում է սոցիալական այլ խմբեր և այդ խմբերում ստացած տպավորությունները կրկին ամբողջացվում են ընտանիքում, կարևորվում է ընտանիքի սոցիալ-հոգեբանական գործոնների ազդեցությունը, հատկապես ծնողական այն վերաբերմունքը, որը դրսևորվում է երեխայի հետ հաղորդակցվելու ընթացքում նրա անհատականությունը, բնավորությունն ու արարքները, հոգեբանական խնդիրները հասկանալու և ընկալելու առանձնահատկությամբ:

Գործնական նշանակությունը: Հետազոտության արդյունքները հնարավորություն են ընձեռում կրտսեր դպրոցականների հետ աշխատող հոգեբաններին, հոգեթերապևտներին, մանկավարժներին, ինչպես նաև ծնողներին իրատեսորեն ճանաչել և գնահատել երեխայի վախի, տագնապի դրսևորումները, արդյունավետ կազմակերպել դրանց կանխարգելման գործընթացը:

Հետազոտության արդյունքների հիման վրա կազմված գործնական հանձնարարականները կարող են օգտակար լինել ծնողներին՝ երեխայի դաստիարակության գործընթացում:

Ատենախոության տեսական դրույթները և ստացված արդյունքները կարող են օգտագործվել «Սոցիալական հոգեբանություն», «Ընտանիքի հոգեբանություն», «Տարիքային և մանկավարժական հոգեբանություն», «Երեխայի հոգենաբանություն», «Կլինիկական հոգեբանություն», «Մանկական վախերի հիմնահարցեր» դասընթացներում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները՝

1. ԸՆտանիքի և կրտսեր դպրոցականի սոցալական «նոր» կարգավիճակի հետազոտությունը հնարավորություն է տալիս ամբողջական պատկերացում կազմել կրտսեր դպրոցականի դպրոցական վախերի, տագնապների առաջացման, կանխարգելման և հաղթահարման մասին, որոնք պայմանավորված են ընտանիքի սոցիալ-հոգեբանական գործոնների ազդեցությամբ (ներընտանեկան գործառույթներ, հարաբերություններ, ծնողական վերաբերմունք):

2. Ներընտանեկան հարաբերությունները փոխադրվում են սոցիալական այլ խմբեր՝ մանրակերտ հանդիսանալով այն հարաբերությունների համար, որոնք ստեղծվում են դպրոցի և կրտսեր դպրոցականի միջև:

Համապատասխանաբար դպրոցական վախերի, տագնապների հանդեպ նախատրամադրվածությունը ևս պայմանավորված է ներընտանեկան հարաբերությունների բնույթով:

3. Դպրոցական լինելու ներքին դիրքորոշումը (սովորելու սոցիալական մոտիվը) թույլ է տալիս երեխային ներգրավվել ուսումնական գործընթացին՝ որպես ինքնակազմակերպվող, ինքնավերահսկվող սուբյեկտ, ինչը պայմանավորում է կրտսեր դպրոցականի մոտ սոցիալական վախերի և դպրոցական տագնապայնության գերակայությունը:

4. Ձևավորող աշխատանքի միջոցով հնարավոր է նպաստել կրտսեր դպրոցականի ծնողի վերաբերմունքի, հոգեբանական գիտելիքների, հմտությունների համարժեք ձևավորմանը, հետևաբար նաև երեխայի դպրոցական վախերի, տագնապների կանխարգելմանն ընտանեկան միջավայրում:

<u>Հետազոտության արդյունքների հուսալիությունն ու հիմնավորվածությունն</u> ապահովված են հիմնահարցի վերաբերյալ տեսական մոտեցումների և մեթոդաբանության ուսումնասիրմանբ, հետազոտության նպատակներին համապատասխանող մեթոդների և մեթոդիկաների ընտրությամբ, ուսումնասիրվող համակազմի քանակով, հետազոտության տվյալների հոգեբանական և մաթեմատիկական մշակման հուսալի համակարգով:

<u>Աշխատանքի փորձարկումն ու հրապարակային քննարկումը:</u> Աշխատանքի գիտագործնական դրութերը ներկայացվել են զեկուցումների և հրապարակումների ձևով՝ Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանում կազմակերպված տեսական սեմինարների շրջանակներում (2006, 2010, 2013թթ.), Հոգեբանների Միջազգային XXVII կոնֆերանսում (Ստոկհոլմ, 2000թ.), «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրներ» թեմայով IV միջազգային գիտաժողովում (Երևան, 2014թ.), հետազոտության նյութերը և արդյունքները քննարկվել են Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանի հոգեբանության ամբիոնի նիստերում, հետազոտվող ընտանիքների համար կազմակերպված սեմինարներում:

Աշխատանքն իրականացվել է Գործնական հոգեբանության և սոցիոլոգիայի «Ուրարտու» համալսարանում:

<u>Ատենախոսության կառուցվածքը և ծավալը:</u> Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, եզրակացությունից, գրակա-նության ցանկից (76 աղբյուր) և հավելվածից (7):

Ատենախոսության ընդհանուր ծավալը կազմում է 136 էջ:

Ներկայացված է 10 աղյուսակ, 2 նկար, 5 հիստոգրամա և 1 գծապատկեր:

Ատենախոսության հիմնական բովանդակությունը

Ներածության մեջ հիմնավորված է թեմայի արդիականությունը, ձևակերպված է նպատակը, սահմանված են հետազոտության վարկածը, օբյեկտը, առարկան, խնդիրները և պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները: Ներկայացված են մեթոդաբանական հիմքերը, մեթոդները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը, հետազոտության փորձաքննությունն ու ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսության առաջին՝ ***«Ընտանիքը և կրտսեր դպրոցականի վախերի դրսևորումը»,*** գլխում հանգամանորեն վերլուծել ենք ժամանակակից ընտանիքի, ներընտանեկան հարաբերությունների և գործառույթների հիմնահարցը, ընտանիքի ազդեցությունը կրտսեր դպրոցականի սոցիալական կարգավիճակի և դերի հոգեբանական կազմավորման, դպրոցական վախերի և տագնապների դրսևորման գործընթացում:

Երեխայի սոցիալականացման գործընթացն առաջին հերթին ընթանում է ընտանիքում՝ սոցիալական դերերի, արժեքների յուրացման և սեփական վերաբերմունքը մշակելու, անհատական առանձնահատկություններն իրագործելու միջոցով: Հետևաբար, դպրոցական կյանքում ծագող խնդիրների նկատմամբ երեխայի վերաբերմունքի մեջ գերակշռող մաս են կազմում ընտանեկան միջավայրում ձեռք բերած սոցիալական դիրքորոշումները, որոնք նպաստում կամ խոչընդոտում են վախերի, տագնապների դրսևորմանը: Ընտանիքի կառուցվածքը, քանակական կազմը, ծնողական դաստիարակության ոճը, ներընտանեկան հարաբերությունները ձևավորում են աշխարհի հանդեպ վստահության կամ անվստահության առաջնային հիմնային մակարդակ, ինչը կարևոր դեր և նշանակություն ունի վախերի դրսևորման և կանխարգելման գործընթացում:

Ընտանիքի սոցիալ-հոգեբանական համակարգի և կրտսեր դպրոցականի վախերի հինախնդրին անդրադարձել են մի շարք փիլիսոփաներ, հոգեբաններ, հոգեթերապևտներ, որոնց ներդրումն արժևորելով, ներկայացրել ենք մեր մոտեցումը՝ կարևորելով դպրոցական վախերի դրսևորման վրա հատկապես ծնողական վերաբերմունքի ազդեցությունը, ինչը դիտարկվում է որպես երեխայի հետ հաղորդակցվելու ընթացքում կիրառվող վարքաձևերի, նրա անհատականությունը, բնավորությունն ու արարքներն ընկալելու և հասկանալու առանձնահատկությունների համակարգ:

Ատենախոսության երկրորդ՝ ***«Ընտանիքը որպես կրտսեր դպրոցականի վախերի և տագնապների կանխարգելման միջավայր»***, գլխում ներկայացրել ենք ներընտանեկան փոխհարաբերությունների, ծնողական վերաբերմունքի դերը դպրոցական վախերի և տագնապների կանխարգելման գործընթացում: Հանգամանորեն վերլուծել ենք ընտանեկան սոցիալ-հոգեբանական գործոնների անտեսման և չիմացության բացասական հետևանքները՝ դրանով իսկ կարևորելով այդ գործոնների դերը և կանխարգելիչ նշանակությունը:

Սոցիալական նոր իրավիճակը, որում գտնվում է կրտսեր դպրոցականը, ենթադրում է ընտանիքի դերի բարձրացում, ինչն առաջին հերթին կարևորվում է ծնողի և երեխայի դերային հարմարմամբ: Ծնողը պետք է հարմարվի երեխայի դերի, նրա սպասումների փոփոխություններին, այլապես երեխայի սոցիալականացման գործընթացում կարող են ծագել մի շարք խնդիրներ՝ հանգեցնելով նրա հոգեկան ոլորտի տարաբնույթ շեղումների:

Կրտսեր դպրոցական տարիքն առանձնանում է մեծահասակի կողմից ճանաչման ձգտմամբ, որի չիրագործման արդյունքում երեխաները վախենում են «ոչ այնպիսին» լինելուց, սխալվելուց, ցածր գնահատական ստանալուց: Հետևաբար, մեծահասակի կողմից երեխայի ճանաչման ձգտման բավարարումը կարող է կանխարգելել դպրոցական վախերը, տագնապները:

Կարևորելով ընտանիքի սոցիալականացնող գործառույթը, նշենք, որ տղայի և աղջկա սոցիալականացման գործընթացներն ի սկզբանե տարբերվում են: Ես-հայեցակարգի, որպես տղամարդու և կնոջ ձևավորումը, սկսվում է վեցից ութ տարեկանից: Երեխայի զարգացումն ընթանում է անձնական փորձի, նրա համար ռեֆերենտ մարդկանց հետ նույնականացման հիման վրա: Համապատասխանաբար, սկզբնապես ընտանիքն է երեխայի մոտ ձևավորում աշխարհընկալում, դիրքորոշումներ, մտածողություն՝ ապահովելով շրջապատող աշխարհի առավել իրատեսական ճանաչումը և անձի հարմարեցումը նրանում:

Ընտանիքում երեխայի մոտ «մենք» -ի զգացումի ձևավորման արդյունք է դպրոցական անհարմարվողականությունը, երբ երեխան անգիտակցաբար ձգտում է մեկուսացման, ընդունված նորմերի և կանոնների չընդունման, որը նրա կողմից ընկալվում է որպես սեփական «ես»-ի պահպանման միջոց: Դպրոցական անհարմարվողականությունը դրսևորվում է անհանգստությամբ բարձր տագնապայնությամբ, վախերով:

Վախերի հաճախականության արտահայտման վրա մեծ ազդեցություն ունի նաև ընտանիքի ոչ լիարժեք լինելը, լիարժեք ընտանիքի քանակական կազմը, տատիկի և պապիկի ներկայությունը, ծնողների տարիքը, իսկ ավագ քրոջ կամ եղբոր առկայությունն ընտանիքում ապահովում է լավագույն հոգեբանական պաշտպանություն, թեկուզ այն պատճառով, որ նրանք վերապրել են այն, ինչ պետք է ապրեն նրանց փոքր քույրը կամ եղբայրը: Վախերի և տագնապների ավելի շատ է ենթարկվում ընտանիքում միակ երեխան, որը դառնում է ծնողական հույզերի և հոգսերի էպիկենտրոն:

Այսպիսով, ընտանեկան մթնոլորտը կարող է միավորել ներկա, անցյալ և ապագա վախերն ու տագնապները՝ ուղղակիորեն դրսևորվելով ծնողական վերաբերմունքում:

Ընդհանրացնելով հուզական ոլորտի վրա ազդող սոցիալական գործոնները, հարկ է կարևորել դաստիարակության ոճը, որն իրականացնելու համար անհրաժեշտ է հաշվի առնել երեխայի խառնվածքի տիպը:

Դպրոցի հետ կապված խնդիրների շուրջ անհանգստությունը հաճախ ծնողներին «ստիպում» է ներշնչել, փոխանցել երեխային սեփական տագնապները: Արդյունքում երեխան ձեռք է բերում ավելորդ լարվածություն, իր

ուժերի նկատմամբ անվստահություն, «այնպես չանելու», չհասցնելու զգացողություն, վախ և տագնապ:

Ծնողական վերաբերմունքը կարևորվում է նաև այն պարագայում, երբ երեխան ունի տարիքին բնորոշ որևէ վախ կամ տագնապ, ինչը կարող է անցնել, եթե ծնողն իր վերաբերմունքով ավելի շատ չամրապնդի երեխայի անհանգստությունը, տագնապն ու վախը: Հետևաբար, ողջ խնդիրը երեխայի նկատմամբ ունեցած ծնողական վերաբերմունքի մեջ է:

Խիստ, սկզբունքային ծնողները, որոնք երեխային զրկում են դրական, հուզական տպավորություններից, շատ հաճախ զրկում են նաև հասակակիցների հետ շփումից որի արդյունքում նման ծնողների երեխաները տագնապի զգացում են ապրում: Չափազանց շատ խնամակալ վերաբերմունքը երեխայի մոտ ծնում է սեփական ուժերի նկատմամբ անվստահության զգացում և երեխան դառնում է խոցելի, հակված տարաբնույթ տագնապների և վախերի:

Հոգեբանական գրականության մեջ առանձնացնում են բացասական ազդեցությամբ ծնողական դաստիարակության տարբեր ձևեր (Վ. Գարբուզովի, Ա.Զախարովի, Ա. Սպիվակովսկայայի, Ի.Դուբրովինայի կողմից), որոնք կարող են նպաստել վախերի, տագնապների առաջացմանն ու խորացմանը: Ա. Սպիվակովսկայան կարևորում է դպրոցական հոգեբանի դերը, նշելով, որ եթե ծնողներն ու ուսուցիչները համագործակցեն հոգեբանի հետ՝ երեխային օգնելու գործում, կարելի է կիրառել տարբեր մեթոդիկաներ, որոնք կսովորեցնեն ծնողներին վերլուծել իրենց գործունեությունը՝ որպես մայր կամ հայր: Մեր աշխատանքը ևս նպատակ ունի կարևորելով ընտանիքի դերը՝ նպաստել հոգեբանի դերի բարձրացմանը, որի մեծագույն խնդիրն է դպրոցում ձևավորել ընտանիք-երեխա-դպրոց նոր տիպի համակարգ, որտեղ հոգեբանը մեծացնում է ծնողների հոգեբանական գիտելիքների ծավալն ի նպաստ իրենց երեխաների: Այսպիսով, վախերի կանխարգելման նպատակով անհրաժեշտ է ընտանեկան հարաբերությունների կարգավորում: Կրտսեր դպրոցականի վախերը, տագնապները կարելի է մեղմել և կանխարգելել մի շարք մեթոդների օգնությամբ՝ ներառելով դրանք ընտանեկան թերապիայի շրջանակներում: Ընտանեկան թերապիայի ամենակարևոր ձեռքբերումներից մեկը՝ ծնողների «սխալ» դիրքորոշումների համակարգի փլուզումը և նոր մոտեցումների մշակումն է:

Երրորդ՝ ***«Կրտսեր դպրոցականի վախերի կանխարգելման գործում ընտանիքի սոցիալ-հոգեբանական գործոնների հետազոտումը»*** գլխում, նկարագրված է հետազոտության մեթոդական համալիրը, համակազմը, ներկայացված է կրտսեր դպրոցականների հետ հետազոտական աշխատանքների կազմակերպումը, դպրոցական վախերի, տագնապների և ծնողական վերաբերմունքի միջև հարաբերակցությունը, ծնողական վերաբերմունքի կարգավորմանն ուղղված ձևավորող գիտափորձի ծրագիրը, ընթացքը, վերլուծությունը: Հետազոտությանը մասնակցել են վեցից տաս տարեկան 160 երեխա (80-ը՝ արական, 80-ը՝ իգական սեռի) և նրանց ծնողները (թվով 160): Օգտագործել ենք դիտման, զրույցի, հարցազրույցի, թեստավորման,

ձևավորող գիտափորձի և արդյունքների վիճակագրական վերամշակման մեթոդները: Մասնավորապես կիրառվել են հետևյալ մեթոդիկաները.

- «Ֆիլիպսի դպրոցական տագնապայնության թեստ»-ը՝ թարգմանված հայերեն (նախնական փորձարկում՝ նախատեսող երկկողմանի թարգմանությամբ և համեմատում բնօրինակի հետ):
- Ա. Վարգայի և Վ. Ստոլինի կողմից մշակված «Ծնողական վերաբերմունքի թեստ-հարցարան»-ը՝ տեղայնացված Հայաստանում:
- Պրոյեկտիվ մեթոդիկաներ՝ Ռ. Բեռնսի և Ս. Կաուֆմանի կողմից առաջադրված «Ընտանիքի կինետիկ նկար»-ը, Ջ. Բուկի առաջարկած «Տուն, ծառ, մարդ» թեստի Ռ. Բեռնսի տարբերակը, «Պատմության ավարտի հորինում» (հեղինակային):
- «Ինչի՞ց եմ ես վախենում» և «Վախի նշաններ» հարցազրույցները՝ հեղինակային հարցաշարերի կիրառմամբ:
- «Ձևավորող գիտափորձ», որի միջոցով նպատակ ենք հետապնդել ապահովել կրտսեր դպրոցականի վախերի, տագնապների կանխարգելման գործընթացը՝ ծնողական վերաբերմունքի «ժխտում» -ից դեպի «ընդունում» փոփոխության ուղիով: Ձևավորող գիտափորձն իրականացվել է ծնողների հետ թեմատիկ զրույցների, ընտանեկան թերապիայի տեխնիկաների (ախտորոշիչ, հոգեվերլուծական զրույցի, խորհրդատվական զրույցի, ծնողի՝ երեխայի հանդեպ ունեցած վերաբերմունքի գիտակցման, անձնային վարքագծային դրսևորումների վրա կենտրոնանալու, դրական դինամիկ փոփոխությունների) միջոցով:

<u>Հետազոտության արդյունքների վերլուծությունը</u>

Ընդհանրացնելով դիտման, զրույցի, հարցազրույցի, թեստերի, պրոյեկտիվ մեթոդների տվյալները, հնարավոր դաձավ բացահայտել որոշ օրինաչափություններ. 1. Երեխաները հիմնականում ունեն ոչ թե մեկ, այլ մի քանի վախեր (ինչը վկայում է երեխայի մոտ տագնապայնության զարգացման մասին), 2. և' արական, և' իգական սեռի կրտսեր դպրոցականների մոտ գերակշռում են սոցիալական վախերը (ինչը պայմանավորված է կրտսեր դպրոցականի նոր կարգավիճակով), 3. վախերի քանակը և' արական, և' իգական սեռի դպրոցականների մոտ գրեթե հավասար է (աննշան շատ աղջիկների մոտ՝ պայմանավորված նրանց առավել զգայուն լինելու փաստով), 4. կրտսեր դպրոցականների մոտ առկա են միջին և բարձր մակարդակի սոցիալական տագնապայնության դրսևորումներ, 5. ծնողների մոտ առկա է ծնողական վերաբերմունքի «ժխտում» ցուցանիշը I-II դասարաններում սովորող երեխաների նկատմամբ առավել շատ, քան III-IV դասարաններում՝ պայմանավորված դպրոցական կյանք մուտք գործելու հետ կապված ծնողի բարձր լարվածությունով, 6. կրտսեր դպրոցականի վախերի, տագնապների և ծնողական վերաբերմունքի միջև առկա է փոխկապվածություն:

Հիստոգրամա թիվ 1.



«Ինչի՞ց եմ ես վախենում» հեղինակային հարցաշարի կիրառմամբ հարցազրույցի արդյունքների համեմատական ըստ վախերի քանակի, բնույթի և մասնակիցների սեռի:

Հիստոգրամայից պարզ երևում է, որ առկա է սոցիալական վախերի գերակայություն. տղաների մոտ 61, 5% սոցիալական վախեր, 38.5%՝ բնազդային, աղջիկների մոտ 54.4% սոցիալական վախեր, 45.6%՝ բնազդային:

Հիստոգրամա թիվ 2.



«Ֆիլլիպսի դպրոցական տագնապայնության թեստ» -ի արդյունքները. Տագնապայնության միջին և բարձր մակարդակների առկայությունը I-II և III-IV դասարանցիների մոտ:

Ինչպես կարելի է նկատել, կրտսեր դպրոցականների մոտ առկա է միջին և բարձ մակարդակի դպրոցական տագնապայնություն, ընդ որում՝ I-II դասարանցիների մոտ միջին և բարձր մակարդակների տագնապայնությունն առավել շատ է քան III-IVդասարանցիների մոտ, ինչը բացատրում ենք դպրոցական կյանքի նոր պայմաններին հարմարվելու դժվարությունների հետ:

Հիստոգրամա թիվ 3.



«Ծնողական վերաբերմունքի թեստ-հարցարան»-ի արդյունքները. ծնող. վերաբ-ի «ընդունում» և «ժիստում» ցուցանիշերը I, II և III, IV դասարաններում:

Վերոնշյալ հիստոգրամայից պարզ է դառնում, որ I-II դասարանցիների ծնողների մոտ «ժխտում» ցուցանիշն առավել հաճախ է հանդիպում (69%), քան III-IV դասարանցիների ծնողների մոտ (31%): Համեմատելով նախորդ՝ «Ֆիլլիպսի դպրոցական տագնապայնության թեստ» -ի արդյունքների հետ, պարզ է դառնում կապը ծնողական ժխտողական վերաբերմունքի և տագնապայնության միջին, բարձր մակարդակների միջև:

Մաթեմատիկական վիճակագրական տվյալները հաշվարկվել են Excel, SPSS ծրագրերով [52]:

Բացի միջին արժեքների և ստանդարտ շեղումների ցուցանիշներից, կատարվել է նաև գծային կոռելյացիայի փոխկապվածության գործակցի հաշվարկ երկու թեստային ցուցանիշների միջև. «Ֆիլլիպսի դպրոցական տագնապայնության թեստ» և «Ծնողական վերաբերմունքի թեստ-հարցարան»:

Նաև անցկացվել է միջին ցուցանիշների համեմատություն հոգեբանական աշխատանքից առաջ և հետո, կրկնակի թեստավորման արդյունքների միջև ըստ Ստյուդենտի չափանիշի հաշվարկման գործակցի: Թեստային ցուցանիշների մաթեմատիկական վիճակագրության հաշվարկները մինչև հոգեբանական աշխատանքների սկսելը. «Ֆիլլիպսի դպրոցական տագնապայնության թեստ» -ից ստացված արդյունքներով հետազոտական խմբում միջին ցուցանիշը կազմում է 31, իսկ ստանդարտ շեղումը՝ 10, 7:

Ծնողական վերաբերմունքի թեստ-հարցարան» -ի համար միջին արժեքը՝ 18, իսկ ստանդարտ շեղումը՝ 3, 9:

Երկու ընտրանքների միջև կոռելյացիոն փոխկապվածության ցուցանիշը 0, 001 հավաստմամբ կազմել է -0, 6: Այս գործակիցը վկայում է այն մասին, որ ինչքան արտահայտված է երեխաների մոտ տագնապայնության ցուցանիշը, այնքան ծնողական վերաբերմունքի մեջ դրսևորվում է ժխտում: Այսպիսով, մեր հետազոտական խմբի համար, ինչը նաև հսկիչ խումբ էր, տագնապի ցուցանիշը հակադարձ է կոռելացվում ծնողական վերաբերմունքի ընդունման հետ:

Ծնողական վերաբերմունքի համարժեք ձևավորմանը միջամտելու, նպաստելու հնարավորությունը և ուղիները բացահայտելու, դրանով իսկ կրտսեր դպրոցականի տագնապները, վախերը կանխարգելելու նպատակով մեր կողմից կազմակերպվել է ձևավորող գիտափորձ:

Ձևավորող գիտափորձն իրականացվել է ընտանիքի սոցիալ-հոգեբանական գործոնների, ծնողական վերաբերմունքի և կրտսեր դպրոցականի վախերի, տագնապների վերաբերյալ ծնողի հետ թեմատիկ զրույցների, ընտանեկան թերապիայի տեխնիկաների (ախտորոշիչ, հոգեվերլուծական զրույցի, խորհրդատվական զրույցի, սեփական վերաբերմունքի գիտակցման, անձնային վարքագծային դրսևորումների վրա կենտրոնանալու, դրական դինամիկ փոփոխությունների) միջոցով:

Ձևավորող գիտափորձի առաջին փուլում փորձեցինք աշխատել ծնողների հետ՝ ծնողական վերաբերմունքի կարգավորման նպատակով: Ծրագրի իրականացումը նպաստեց ծնողական վերաբերմունքի «ժխտում»-ից դեպի «ընդունում» փոփոխությանը: Ձևավորող գիտափորձի հաջորդ փուլում

ծնողներին ներկայացրինք մեր կողմից մատչելիության սկզբունքով մշակված հոգեբանական հմտությունների, տեխնիկաների ծրագիր, որով նրանց հնարավորություն ընձեռվեց ծնողական վերաբերմունքի փոփոխությամբ, համակարգված ձևով անմիջական ներգործություն գործել երեխաների վախերի, տագնապների դրսևորումների, դրանք կանխարգելող գործոնների վրա՝ կիրառելով ֆունկցիոնալ երաժշտության, խաղաթերապիայի, արտ-թերապիայի մեթոդներ և տեխնիկաներ (մեր օգնությամբ):

Երեխայի վրա ներազդելու միջոցառումների ստուգիչ փուլն իրականացվեց կրկնակի վերաթեստավորման միջոցով: Կրկնակի թեստավորման արդյունքներում նկատելի են հոգեբանական աշխատանքներից հետո ստացված միջին ցուցանիշների տարբերությունները.

Աղյուսակ թիվ 1

	միջ. արժեք	հետազոտ. քանակ	ստանդ. շեղում
Ծնող. վերաբ. ցուց. հետազ. խմբի համար մինչև աշխ. սկսելը	17,90	84	3,876
Ծնող.վերաբ.ցուց. հետազ. խմբի համար հոգեբ.աշխ-ից հետո	20,05	84	2,675

Աղյուսակ թիվ 2

	միջ. արժեք	հետազոտ. քանակ	ստանդ. շեղում
Տագնապ.ցուց.հետազ. խմբի համար մինչև աշխ. սկսելը	31,60	84	10,708
Տագնապ.ցուց.հետազ. խմբի համար հոգեբ.աշխ-ից հետո	25,13	84	8,258

Այսպիսով, կարող ենք փաստել, որ հետազոտական խմբում հոգեբանական աշխատանքների դրական արդյունքն այն է, որ ծնողական վերաբերմունքի ցուցանիշները փոխվել են դեպի «ընդունում», հետևաբար նվազել են նաև տագնապայնության «միջին» և «բարձր» ցուցանիշները:

Հսկիչ խմբի համար կատարված հաշվարկներում արդյունքը հետևյալն է. ծնողական վերաբերմունքի համար միջին արժեքը 18.89՝ մինչև հոգեբանական աշխատանքներ սկսելը, աշխատանքներից հետո՝ 19.36: Տագնապայնության ցուցանիշները մինչև աշխատանքները սկսելը 29.00, իսկ հոգեբանական աշխատանքներից հետո՝ 27.22:

Էական փոփոխությունն այն է, որ ըստ T-Ստյուդենտի չափանիշի հաշվարկման բանաձևի կատարված տագնապայնության միջին ցուցանիշների համեմատության գործակցում հետազոտական խմբի համար ստացել ենք գիտական հավաստում 0, 001 նշանակալիությամբ, քանի որ Tst-ն կազմել է 7, 39 թույլատրելի արժեքի 3, 40-ի դեպքում, df=83 (n=84, կախյալ ընտրանքների դեպքում հաշվարկվում է n=1 դեպքերի համար):

Ինչ վերաբերվում է «Ծնողական վերաբերմունք թեստ-հարցարան»-ով ստացված միջին ցուցանիշների տարբերությանը հոգեբանական

աշխատանքներից առաջ հետո, նույնպես առկա է էական տարբերություն հետազոտական խմբի համար, որը կազմել է 0, 001 նշանակալիությամբ 5, 39 թույլատրելիության նույն 3, 4-ի դեպքում:

Տագնապայնության միջին ցուցանիշների տարբերությունը հսկիչ խմբի համար. T-Ստյուդենտի գործակիցն ընդամենը 3,31 է՝ թույլատրելի արժեքի 3,42 դեպքում, df=75 (n=76, կախյալ ընտրանքների դեպքում հաշվարկվում՝ n=1 դեպքերի համար): Ծնողական վերաբերմունքի միջին ցուցանիշների տարբերությունը հսկիչ խմբի համար 1,77 է, ինչը շատ փոքր մեծություն է տարբերությունների հավաստման համար:

Այսպիսով, փորձարարական խմբում արձանագրվել է ցուցանիշների զգալի աճ, իսկ հսկիչ խմբում՝ փոքր աճ, ինչը մենք բացատրում ենք թեստերի ստիմուլային նյութի ազդեցությամբ:

Եզրակացություններ

Տեսական և փորձարարական հետազոտությունների արդյունքները թույլ են տալիս հանգել հետևյալ եզրակացություններին.

1. Տեսական աղբյուրների ուսումնասիրությունը և վերլուծությունը ցույց է տվել, որ վախերի վերաբերյալ հետազոտությունները մինչ օրս միակողմանի են մեկնաբանում ընտանեկան գործոնների կարևորությունը դպրոցական տագնապների, վախերի կանխարգելման գործում: Հոգեդինամիկ տեսությունները ընտանիքը դիտարկուն են որպես վախերի կանխարգելման գործոններից մեկը:

2. Կրտսեր դպրոցական տարիքում վախերի, տագնապների մասին ամբողջական պատկերացման համար անհրաժեշտ է ընտանիքը դիտարկել որպես առաջնային, ամենագլխավոր, ելակետային միջավայր և իրականացնել ընտանիքի կառուցվածքի, դերերի, հիմնական գործառույթների, ներընտանեկան հարաբերությունների, ծնողական վերաբերմունքի համակողմանի հետազոտություն:

3. Մեր կողմից իրականացված հետազոտության արդյունքները հաստատում են, որ կրտսեր դպրոցական տարիքում վախերը, տագնապները պայմանավորված են ընտանիքի սոցիալ-հոգեբանական գործոններով, ծնողական «ընդունող» կամ «ժխտող» վերաբերմունքով, որը կողմնորոշում է երեխային սոցիալական այլ միջավայրերում: Ներընտանեկան հարաբերություններում ձեռք բերված փորձը, մեծամասամբ ենթագիտակցորեն, երեխան փոխադրում է սոցիալական այլ խմբեր՝ անհատական յուրահատկություն տալով այդ նոր խմբերի հետ հարաբերություններին և միահյուսվելով նոր տպավորությունների հետ ձեռք է բերում (կամ ձեռք չի բերում) վախի, տագնապի նշանակություն: Հետևաբար, ընտանիքի, ծնողական վերաբերմունքի դերը վախերի դրսևորման և կանխարգելման գործում ոչ թե կարևոր է, այլ ամենագլխավորն է:

4. Կրտսեր դպրոցականի վախերի, տագնապների մակարդակը պայմանավորում են ծնողական վերաբերմունքը, ներընտանեկան հարաբերությունների բնույթը (*առաջնային,* որոնք նպաստում են երեխայի հոգեկան առողջության

ապահովմանն ու վախերի կանխարգելմանը և *երկրորդային,* որոնք խոչընդոտում են ինքնահաստատման կայացմանը՝ ուղղակիորեն անդրադառնալով երեխայի տագնապայնության, վախերի դրսևորման վրա), գործառույթները (*ներքին* որոնց համապատասխան իրագործումն ապահովում է ներընտանեկան սոցիալականացումը, պաշտպանվածությունը, հաղորդակցվելու պահանջմունքի բավարարումը և արտաքին, որոնք հնարավոր են դարձնում *ներքին* գործառույթների իրականացման արդյունքում երեխայի զարգացումն ամրագրել սոցիալական այլ խմբերի հետ շփման ընթացքում):

5. Կրտսեր դպրոցականի նոր կարգավիճակը, դպրոցական լինելու ներքին դիրքորոշումը ենթադրում է երեխայի կողմից նոր դերի իրագործում, ինչը թույլ է տալիս նրան ներգրավվել ուսումնական գործընթացին որպես ինքնակազմակերպվող, ինքնավերահսկվող սուբյեկտ: Այս գործընթացն ուղեկցվում է դերային բախումներով, սոցիալական վախերի և դպրոցական տագնապայնության գերակայությամբ: Եվ նկատի ունենալով այն փաստը, որ ներընտանեկան հարաբերությունները փոխադրվում են սոցիալական այլ խմբեր, պետք է կարևորենք ընտանիքի ազդեցությունը նաև երեխայի նոր կարգավիճակի, դերի հետ կապված խնդիրներում. այդ են հաստատում մեր հետազոտության արդյունքները:

6. Դպրոցական տագնապայնության մակարդակը I-II դասարանցիների մոտ առավել բարձր է, քան III-IV դասարանցիների մոտ, ինչը բացատրվում է դպրոցական կյանքի նոր պայմաններին (նոր կարգավիճակին, հարաբերություններին) հարմարվելու խնդրով, ուսումնական գործընթացին առնչվող այլ գործոններով և առավելապես ծնողական ժխտողական վերաբերմունքով: Վերջինս պայմանավորված է առաջին դասարանցու ծնողի հուզական վերաբերմունքով երեխայի նկատմամբ, որում դրսևորվում է երեխայի արաքները չընկալելու, չհասկանալու, դժվարությունները չընդունելու, երեխայի անձնական հոգեբանական խնդիրները չգիտակցելու, նրան որպես չհարմարվող, անբավարար խելամտությամբ և վատ սովորություններով ընկալելու վարքաձևերով: Հետևաբար ծնողի ժխտողական վերաբերմունքի և դպրոցական տագնապայնության բարձր մակարդակի միջև կապն անհերքելի փաստ է:

7. Կրտսեր դպրոցական տարիքում սեռային գործոնի ազդեցությունը վախերի, տագնապների դրսևորման վրա աննշան է, գրեթե առկա չէ, և' արական, և' իգական սեռի մոտ գերակշռում են սոցիալական ծագումով վախերը, ինչը պայմանավորված է դպրոցական կյանքի նոր պայմաններով, դժվարություն-ներով, որոնց հանդեպ երեխայի վերաբերմունքը մշակվում և ամփոփվում է ընտանիքում, հետևաբար ընտանիքի սոցիալ-հոգեբանական գործոնների ազդեցությունն ամենագլխավորն է սոցիալական վախերի դրսևորման գործում:

8. Կրտսեր դպրոցականի վախերն ու տագնապները հիմնականում պայմանավորված են ընտանիքի սոցիալ-հոգեբանական գործոններով և ամրապնդվում են դրանց հիման վրա ձևավորվող սոցիալական աճի, ակտիվության, պատասխանատվության, պարտքի ու պարտականության դրսևորումներով: Հետևաբար, տարիքին բնորոշ սոցիալական զգացումի

ձևավորումը կարող է բացասաբար անդրադառնալ ընտանիքի անբարենպաստ ազդեցության պայմաններում:

9. Ձևավորող գիտափորձի միջոցով հնարավոր է միջամտել կրտսեր դպրոցականի ընտանիքի սոցիալ-հոգեբանական գործոնների, ծնողական վերաբերմունքի առանձնահատկություններին, նպաստել վերջիններիս համարժեք կայացմանը, դրանով իսկ վախերի, տագնապների կանխարգելմանը:

Կրտսեր դպրոցականի վախերի և տագնապների կանխարգելման մեթոդական հանձնարարականներ. 1.Վախեր և տագնապներ ունեցող երեխաների ծնողների հետ խորհրդատվական զրույցի կիրառում, որի ընթացքում իրականացվում է ծնողի լուսաբանում՝ սեփական վարքագծի, երեխայի վախերի, տագնապների վերաբերյալ, ծնողի ուշադրությունը կենտրոնացվում է փոքրիկին ընկալելու և հասկանալու կարողության, վերաբերմունքի փոփոխության վրա: Վերոնշյալ նպատակով կարևորվում է Վ. Յու. Սլաբինսկու «Ճկուն թրթուռ» պոզիտիվ դինամիկ մեթոդիկան: 2.Ֆունկցիոնալ երաժշտության կիրառում: 3.Դերային խաղի իրագործում: 4. Շարժախաղերի կիրառում. «Բռնոցի», «Աչք կապոցի», «Պահմտոցի»: 5.Հեքիաթ-խաղի կիրառում. «Թագավորը և նախարարները», «Ճնճղուկների ընտանիքը»: 6.Նկարչություն՝ ազատ թեմայի ընտրությամբ և վախի կեպարի արտացոլմամբ: Այս ամենը հնարավորություն է ընձեռում երեխային վերապրել, վերարտադրել և արտամղել վախի հետ կապված հույզերը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրատարակված հետևյալ հրապարակումներում.

1. Պետրոսյան Հ. Լ., Վախի դրսևորման առանձնահատկությունները կրտսեր դպրոցական տարիքում, «Հոգեբանությունը և կյանքը» հանդես, Զանգակ-97 հրատ., Եր., 2002, №3-4, էջ 98-102:

2. Պետրոսյան Հ. Լ., Հոգեբանական նորագոյացումները և միջանձնային հարաբերությունների դրսևորման ձևերը ավագ դպրոցական տարիքում, «Հոգեբանությունը և կյանքը» հանդես, Զանգակ-97 հրատ., Եր., 2005, №2-3, էջ 74-76:

3. Պետրոսյան Հ. Լ., Ընտանիքը որպես կրտսեր դպրոցականների վախերի հաղթահարման նախապայման, «Հոգեբանությունը և կյանքը» հանդես, Զանգակ-97 հրատ., Եր., 2008, № 3-4, էջ 49-54:

4. Պետրոսյան Հ. Լ ., Սեդրակյան Ս. Ա., Ընտանեկան թերապիայի դերը կրտսեր դպրոցականների վախերի հաղթահարման գործում, «Հոգեբանությունը և կյանքը» հանդես, Զանգակ-97 հրատ., Եր., 2009, № 3-4, էջ 21-25:

5. Պետրոսյան Հ. Լ., Ծնողական դաստիարակության ոճերի ազդեցությունը կրտսեր դպրոցականների վախերի վրա, «Մանկավարժական միտք» հանդես, Զանգակ-97 հրատ., Եր., 2010, № 3-4, էջ 31-34:

6. Պետրոսյան Հ. Լ., Ընտանիքի սոցիալ-հոգեբանական գործոնների ազդեցությունը կրտսեր դպրոցականի վախերի կանխարգելման գործում, «Տեսական և կիրառական հոգեբանության արդի հիմնախնդիրները» IV միջազգային գիտաժողովի նյութեր, Եր. 2013, էջ 160-162:

ПЕТРОСЯН РИПСИМЕ ЛЕВОНОВНА
ВЛИЯНИЕ СОЦИАЛЬНО-ПСИХОЛОГИЧЕСКИХ ФАКТОРОВ СЕМЬИ В ПРОФИЛАКТИКЕ СТРАХОВ МЛАДШЕКЛАССНИКА

Диссертация на соискание ученой степени кандидата психологических наук по специальности 19.00.03 «Социальная психология (межличностные отношения, семейная, групповая деятельность)» .

Защита диссертации состоится 17-ого ноября 2015 года в 12:00 на заседании специализированного совета философии и психологии 064 ВАК по присуждению ученых степеней при Армянском Государственном Педагогическом Университете им. Х. Абовяна, по адресу: Ереван, 0010, ул. Тигран Мец 17.

РЕЗЮМЕ

Актуальность исследования обусловлена диспропорциональностью биологического, психологического и социального созревания ребенка в результате быстрых изменений социальной жизни. Здесь важна семья, «принимающая» ориентация отношения родителя в процессе восприятия ребенка. Последнее способствует профилактике страхов младшеклассника и рассматривается как основной и наиболее важный фактор.

Цель исследования:

Раскрыть влияние семейной среды, межсемейных отношений, родительского отношения в процессе профилактики страхов и тревог младшеклассника.

Основные задачи исследования:

1. Путем теоретического анализа обосновать значение влияния межсемейных отношении, функции, количество членов семьи, типа, стиля управления младшего школьника на возникновение и профилактику страхов и тревог ребенка и на этой основе разработать исследовательскую стратегию. 2. Исследовать роль «родительского отношения» в восприятии, понимании, принятии младшеклассника как «таковым», тем самым способствуя профилактики тревог и страхов.
3. Исследовать влияние фактора социального статуса младшеклассника на характер его страхов и тревог. 4. Осуществлять раскрытие взаимосвязанности между школьными страхами, тревогами ребенка и родительским отношением. 5. Проводить формирующий эксперимент с целью профилактики школьных страхов, тревог и возможности способствования, восприятия и раскрытия способов родительского «принимающего» отношения. 6. После формирующего эксперимента проводить раскрытие и анализ школьных страхов и тревог ребенка, а также изменении в уровнях родительского отношения. 7. С помощью дополнительного эксперимента способствовать адекватному формированию психологических знаний, навыков родителя, соответственно профилактики школьных страхов и тревог ребенка в семейной обстановке. 8. На основании

результатов обследования, разработать методические рекомендации для родителей направленные на профилактику страхов младшеклассника.

Гипотеза исследования:

Предполагается, что характер межсемейных взаимоотношений, внутренние и внешние функции отражаются на проявления страхов и тревог младшеклассника. Преимущественно родительское отношение, которое направлено на восприятие ребенка во время общения с ним и на понимание, способствует профилактике страхов младшеклассника и эффективной организации психокоррективных работ.

Научная новизна исследования.

В диссертации представляется новый подход к исследованию страхов и тревог младшеклассника с точки зрения межсемейных отношений, функции и родительского отношения. Сделана попытка определить влияние «родительского отношения» на проявление страхов и тревог школьника, так же показано в результате изменения «родительского отношения» (к принимающему), динамика профилактики и преодоление страхов и тревог. Нами внедренным методическим комплексом всесторонне исследуется процесс профилактики страхов в раннем школьном возрасте.

Теоретическая и практическая значимость исследования.

Данные, полученные в результате проведенного нами исследования, уточняют и расширяют научные представления о взаимосвязанности страхов, тревог младшеклассника и семейных взаимоотношений, функций, а также родительского отношения. Результаты исследования могут быть использованы как для психокоррективных работ с детьми, а также могут быть использованы на курсах «Социальной психологии», «Семейной психологии», »Возрастной и педагогической психологии», «Детской психологии», «Проблемы детских страхов».

Достоверность результатов.

Достоверность результатов обусловлена методологической обоснованностью, соответствием цели, гипотезы и задач, а также использованными методами. Теоретические положения и выводы работы получены на основе досконального научного анализа, богатыми экспериментальными данными и их статистической обработкой.

Апробация и внедрение результатов исследования.

Научно практические положения работы были представлены в виде докладов и публикаций. Результаты исследования обсуждались на кафедре психологии и на теоретических семинарах факультета Психологии университета «Урарту», а так же на семинарах организованных для исследуемых семей.

По теме диссертации опубликовано 6 статей.

Структура работы

Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка литературы и приложений. Обьем работы составляет 136 страниц. Он включает 10 схем, 7 рисунков, из которых 5 в виде гистограммы, 1 график, а также 76 источников литературы.

PETROSYAN HRIPSIME LEVON

THE IMPACT OF SOCIO - PSYCHOLOGICAL FACTORS OF FAMILY IN THE PREVENTION OF FEARS OF A JUNIOR PUPIL

Thesis for a degree of candidate of psychological sciences, in the specialty 19.00.03 "Social Psychology (interpersonal relationships, family, group activities)."

The defense of the dissertation will be held on 17th of November, 2015 at 12: 00 at the session of the Special Board of philosophy and psychology 064 HAC awarding degrees under the Armenian State Pedagogical University after Kh. Abovyan, address: St. Tigran Metsi 17, 0010 Yerevan

SUMMARY

The actuality of the thesis research is conditioned by the disproportion of biological, psychological and social maturation of the child as a result of rapid changes in social life. The a junior pupilwho has difficulties in self-orientation on the verge of the real and the imaginary, demonstrates inappropriate behavior and finds himself in the sphere of fear and anxiety.Here the family, the "accepting" orientation of parental attitude are important in the process of child perception, understanding his/her peculiarities and communication with him/her in appropriate forms. The latter helps to prevent the fears of a junior pupiland is regarded as the main and the most important factor.

Research Objectives:

To expand the impact of family atmosphere, inter-family relationships, parental attitude in the process of prevention of fears and anxieties of the junior pupil.

Main Goals:

1. To substantiate the value of the impact of inter-family relationships, functions, the number of family members, the type, the style of a junior pupilmanagement on the emergence and prevention of fears and anxieties of the child and to develop a strategy based on this through theoretical analysis. 2. To study the role of "parental attitude" in perception, understanding, acceptance of the a junior pupilas "he/she is", thus contributing to the prevention of anxieties and fears. 3. To study the impact of the social status factor of the a junior pupilon the nature of his fears and anxieties. 4. To disclose the interconnection between school fears and anxieties of the child and parental attitude. 5. To carry out a formative experiment aimed at preventing school fears, anxieties, and the possibility of contributing to the perception and disclosure of the methods of parental "accepting" attitude. 6. To conduct disclosure and analysis of school fears and anxieties of the child, as well as those of the changes on the level of parental attitudes after the formative experiment. 7. To contribute to the formation of adequate psychological knowledge, skills of the parent, respectively, the prevention of school fears and anxieties of the child in the family atmosphere through an additional

experiment. 8. To develop guidelines for parents aimed at preventing fears of a junior pupilbased on the survey results.

The hypothesis of the research:

It is assumed that the nature of inter-family interrelationships, internal and external functions are reflected in the expression of fears and anxieties of junior pupil. Mainly in respect of the parental attitude, which is aimed at the child perception in the process of communication with him/her and understanding, contributes to the prevention of fears of a junior pupiland the effective organization of psycho-corrective works.

Scientific Novelty:

The thesis presents a new approach to the study of fears and anxieties of a junior pupilin terms of inter-family relations, functions and parental attitude. The researcher has made an attempt to determine the impact of "parental attitude" on the expression of the fears and anxieties of junior pupil, as shown in the result of «parental attitude» changes (towards accepting attitude) in the dynamics of the prevention and overcoming of fears and anxieties of junior pupil.Through the methodical complex introduced by us the processes of prevention of fears in the early school age is thoroughly studied.

Theoretical and practical significance:

The data obtained in the result of our research, specify and expand the scientific perception of interconnection between fears, anxieties of a junior pupiland family interrelationships, functions, and parental attitude.The results of the research can be useful for psychological corrective works with children, in the process of positive changes of parental attitude, as well as it can be used in the courses of "Social Psychology", "Family Psychology", "Age and Pedagogical Psychology", "Child Psychology", "Problems of Children Fears."

Credibility of Results:

Credibility of research is conditioned by the methodological validity, compliance of the objective, hypothesis, tasks and methods applied. The theoretical provisions and conclusions are obtained via scientific analysis and relevant statistical analysis of experimental data.

Approbation and adoption of research results

The scientific and practical principles of the work are presented in the form of reports and publications. The research resultsere discussed at the Chair of Psychology and at Theory seminars held by the Faculty of Psychology of "Urartu" University, as well as at the seminars organized for families under research.

Six articles have been published on the subject of the thesis.

Work Structure. The thesis consists of introduction, three chapters, conclusion, bibliography and attachments. The work consists of 136 pages. It comprises 10 diagrams, 7 pictures, 5 of which in the form of a histogram, 1 graphic and 76 literary sources.

P. Stepanov